2. Սայաթ-Նովան մի քանի տաղերում (տաղ – չափածո ստեղծագործություն, բանաստեղծություն) հիշատակել է, որ ինքը հալեպցի պանդուխտ Կարապետի և Թիֆլիսի արվարձան Հավլաբարի բնակիչ Սառայի որդին է: Մանկությունն ու պատանեկությունն անցել են Թիֆլիսում: Նախնական կրթությունը սահմանափակվել է գրաճանաչությամբ՝ սովորել է գրել-կարդալ հայերեն, վրացերեն, իմացել է նաև արաբերենի այբուբենը:

Նա, հավանաբար, երկար տարիներ շրջել է Մերձավոր Արևելքում, եղել է Պարսկաստանում, Հնդկաստանում, ուխտի գնացել հայ աշուղների հովանավոր Մշո Սուրբ Կարապետ վանքը (Տարոն):

Սայաթ-Նովան մինչև 30 տարեկանը կատարելագործվել է աշուղական արվեստում, սովորել եղանակներ, հորինել խաղեր (երգեր)՝ հարմարեցնելով հատուկ մեղեդիներ և կատարել ժողովրդական հավաքույթների ժամանակ:

Մասնակցել է Նադիր Շահի Հնդկաստան կատարած արշավանքին (1738-1739)՝ որպես երգիչ-նվագածու: Նրան փրկագնել է վրաց արքայազն Հերակլ Բ-ն և 1742-ին ընդունել արքունիք՝ որպես երգիչ-երաժիշտ: Շնորհիվ արտակարգ գեղեցիկ ձայնի, արվեստի հմայքի՝ Սայաթ-Նովան մեծ համակրանք էր վայելում թագավորի պալատում: Նրա փայլուն տաղանդի ստեղծագործական ծաղկման շրջանը համընկնում է 40-50-ական թվականներին, երբ ծառայում էր արքունիքում:

Պալատական միջավայրում Սայաթ-Նովայի քնարը ոմանց համար անախորժ էր: Նրա դեմ դավեր են նյութում, հեռացնել տալիս պալատից (1759-ին): Հերակլ Բ-ի հարկադրանքով նա քահանա է ձեռնադրվում Տեր Ստեփանոս անվամբ: Ապրելով եկեղեցական խուցերում, Սայաթ-Նովան մինչև իր կյանքի վերջը չի հաշտվում հոգևոր կոչման հետ:

1768-ին մահանում է կինը՝ Մարմարը, թողնելով 4 անչափահաս զավակ (Հովհաննես, Մելիքսեթ, Սառա և Մարիամ): Նույն կամ հաջորդ տարվանից Սայաթ-Նովան տեղափոխվում է վանք, ծառայում Թիֆլիսում հաստատված Հաղպատի միաբանության առաջնորդարանում, ապա դառնում է Հաղպատի վանքի Սբ Նշան եկեղեցու լուսարարը (հետագայում միաբանության հետ վերադարձել է Թիֆլիս):

3. ՔԱՄԱՆՉԱ

Քամանչան հայտնի է հայերին, թերևս, 8-13-րդ դարերից (վկայությունն են այդ դարերից մեզ հասած մանրանկարչության նմուշները): Ժողովրդական լարային աղեղնավոր նվագարան է: Լայնորեն տարածված է Հարավային Կովկասում, Իրանում և հարևան այլ երկրներում: Նախապես ունեցել է 2 լար, ապա՝ 3: Հարավային Կովկասում կենցաղավարող քամանչան 20-րդ դարի սկզբներից քառալար է (մետաղե), 4-րդ լարն ավելացրել և լարվածքը

վերջնականապես հաստատել է հոչակավոր Ս. Օգանեզաշվիլին (Ալեքսանդր Օհանյան)։ Տարածված է հիմնականում քաղաքի երաժշտական կենցաղում։

Քամանչայի իրանը գնդաձև է։ Կլոր կոթից իրանի միջով անցնում է մետաղե կապարաձող, որը նվագարանի համար ծառայում է որպես «ոտք»։ Նվագում են ծնկի վրա, ուղղաձիգ բռնած դիրքում և փայտե բարակ աղեղով՝ վրան ձիու պոչի մազեր ձգված։ Ունի նուրբ, հոսուն-երգեցիկ ձայն։

Աշուղների սիրելի նվագարաններից է. քամանչա է նվագել Սայաթ-Նովան։

4. Մեծն Հովհաննես Թումանյանի տողերը, նվիրված Սայաթ-Նովային.

Խաղով եկավ, ախով գնաց Սայաթ-Նովան,
Երգով եկավ, վերքով գնաց Սայաթ-Նովան,
Սիրով եկավ, սրով գնաց Սայաթ-Նովան,
Սիրով մնաց Սայաթ-Նովան։